ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Դասարանը՝ 7-րդ

Առարկա՝ ինֆորմատիկա

Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հ. Թումանյանի անվան №3 հիմնական դպրոցի

ինֆորմատիկայի ուսուցչուհի՝ Ռուզաննա Պիպոյան

Դասի թեման՝ «Ապահով համացանց»

Դասի նպատակը՝

- **Իմանա և կիրառի** ինտերնետային էթիկայի կանոնները
- Գաղափար ունենա տվյալների անվտանգությունն ապահովող ծրագրային փաթեթների մասին
- Գիտենա ցանցում համատեղ աշխատանքի հիմնական հնարավորությունների մասին
- Հարգի ցանցի աշխատողների իրավունքներըՍովորողների ինքնավստահության զարգացում և տեղեկատվական ռեսուրսների նկատմամբ ուշադիր վերաբերմունքի դաստիարակում:

Խնդիրները՝

- Սովորողներին ծանոթացնել այն հնարավոր վտանգներին, որոնք կարող են հանդիպել համացանցում աշխատելիս, սովորեցնել դրանցից խուսափել
- Տեղեկատվության անվտանգության ապահովման նպատակով վարքի հմտությունների ձևավորում և համացանցում գործնական աշխատանքային հմտությունների յուրացու
- Հմտությունների և կարողությունների մշակում՝ ինֆորմացիայի համեմատություն, քննադատական վերլուծություն, գլխավոր մտքերի առանձնացում և դրանց գրագետ ձևակերպում, լսածի ընկալում և յուրացում
- Սովորողների աշխատանքային ընդլայնում
- Ինքնուրույն մշակույթի ձևավորում

Արժեքային համակարգ՝

- Իմանա ինտերնետից օգտվելու լայն ճանաչում ստացած էթիկայի կանոնները, լինի դրանց կրողն ու տարածողը:

Կահավորումը.

Ցանցին միացված համակարգիչ, պրոյեկտոր, A1 թուղթ, մարկերներ, շնորհանդես (սահիկահանդես)՝ խնդրահարույց իրավիճակներով, ասույթներով քարտեր, դասագիրք

Միջառարկայական կապ.

գրականություն, ֆիզիկա (բարձր հաճախականությամբ էլեկտրամագնիսական ալիքներ), առողջ ապրելակերպ

Ընթացքը.

Կազմակերպչական մաս. խնդրի առաջադրում

Ներկայացնել թեման և ասել, որ այն ոչ միայն հետաքրքիր է, այլ առաջին հերթին

արդիական և շատ կարևոր:

Խթանման փուլ

1. Կազմակերպել մտագրոհ, Գրատախտակին գրել «Համացանց» առանցքային բառը և աշակերտների բոլոր կարծիքները առանց ուղղելու գրել գրատախտակին:



(Նշենք, որ աշակերտները արդեն ինֆորմատիկայի դասընթացից անցել են «Հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ» թեման)

2. ***Իմաստի ընկալման փուլում*** կարճ դասախոսության միջոցով խոսել թեմայի շուրջ (զուգահեռ անցկացնելով անցյալի և ներկայի միջև, բերել անձնական օրինակներ)
3. Դասարանը բաժանել 6 խմբի, յուրաքանչյուր խմբի տալ մեկ իրավիճակ ներկայացնող քարտ և հանձնարարել գտնել խնդրի լուծումը: Խմբերին լսելուց հետո անցկացնել դասարանական քննարկում:

Խնդրահարույց իրավիճակներ

Քեզ զանգահարել են անծանոթ համարից և ներկայանալով տեղեկացնում են, որ Դուք գրանցվել եք իրենց խաղերի կայքում և պարտավորվում եք վճարել ամսական որոշակի գումար և եթե չվճարեք, ապա կենթարկվեք քրեական պատասխանատվության:

Ստացել եք տարօրինակ բովանդակությամբ նամակ, որը պարունակում է սպառնալիք, եթե չվճարեք հետևյալ գումարը, ապա կառևանգեն Ձեր ծնողներին: Ի՞նչ եք պատրաստվում անել:

Մտել եք անծանոթ կայք և Ձեզ ողջունում են հաղորդելով, որ դուք կայքի 1000-երորդ հաճախորդն եք և շահել եք 1մլն. դոլար: Ինչպե՞ս եք արձագանքելու:

Սոցցանցում տարօրինակ անունով մարդ Ձեզ ընկերության առաջարկ է արել: Ինչպե՞ս կարձագանքեք. կընդունեք առաջարկը և կհամալրեք ընկերների ցանկը, թե՞...

Ձեր ընկերուհին ծանոթացել է համացանցով ինչ-որ մեկի հետ և պատրաստվում է գնալ նրա հետ հանդիպման: Ի՞նչ խորհուրդ կտաք դուք:

Գտել եք մի նոր կայք, որտեղից կարող եք անվճար ֆիլմեր ներբեռնել: Ինչպե՞ս կվարվեք:

4. Գրատախտակին գրել «Աշակերտ + Համացանց = ???» «հավասարումը» և առաջարկել գտնել լուծումը:
5. Վենի դիագրամ մեթոդով ներկայացնել Համացանցի դրական և բացասական կողմերը:
6. Ցույց տալ «Անվտանգ Համացանց» շնորհանդեսը և մեկնաբանել:
7. Որպես վիրտուալ և առօրյա շփման օրինակ կիրառել հետևյալ վարժությունը.
   Բոլոր աշակերտներին բաժանել անավարտ ասույթներով քարտեր, հանձնարարել՝ շրջեն դասարանով, գտնեն իրենց նախադասությունների համապատասխան կեսը, միավորվեն, կազմեն զույգ կամ եռյակ և ստացված ժողովրդական իմաստությունը պահպանող ասույթները կիրառեն այսօրվա Համացանցի նկատմամբ:

- ➢ Ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ (օգտակար)
- ➢ Խորամանկ աղվեսը զույգ ոտքով է թակարդն ընկնում
- ➢ Յոթ չափի՛ր, մեկ կտրի՛ր
- ➢ Ինչը փայլում է՝ ոսկի չէ (գայթակղիչ առաջարկ)
- ➢ Համեստությունն ու համբերությունը սարեր շուռ կտան
- ➢ Դար ապրիր, դար սովորիր
- ➢ Լռությունը ոսկի է
- ➢ Խորոված ի հոտի գնացին, էշ էին դաղում
- ➢ Բաց ամանը շունն էլ կլիզի, կատուն էլ
- ➢ Արգելված պտուղը քաղցր է
- ➢ Մրից ելանք, մրջուրն ընկանք

8. Քաջության գլխավոր արժանիքը՝ ողջամտությունն է:

Կշռադատման փուլում կիրառել մեկ կողպեք և հինգ բանալի մեթոդը.

A1թղթի վրա գրել «Անվտանգ Համացանց» կողպեք բառը և խմբերին հանձնարարել դասագրքի «Համացանցին առնչվելու անվտանգությունը և էթիկան» թեմայից ընտրել հինգ բանալի նախադասություններ (նորմեր), որոնք կօգնեն իրենց Համացանցում անվտանգ նավարկել:

9. Անդրադարձի փուլում տալ **«Աշակերտ + Համացանց = ???»** «հավասարման» լուծումը:

«Աշակերտ + Համացանց» = Ով իրազեկված է, նա պաշտպանված է

Գնահատել:

Տնային առաջադրանք սովորել §4.3, այցելել www.safe.am կայքը, ծանոթանալ էջին, կարդալ կայքում տեղադրված «Ընտանեկան զվարճալի ձեռնարկ» էլեկտրոնային գիրքը և խաղալ կայքում առկա ապահով Համացանցին նվիրված esafetykit խաղը: